

## Տ. ԳԱԲՐԻԵԼ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Հրանտ)

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 10-ին, Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում:

1990 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Ձ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին, Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի «Քարոզներ Ս. Գրիգոր Լուսավորչի մասին»» թեմայով:

1998 թ. ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնում:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: